

ՀՀ ԳԱՍ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

14 մոյեմբերի

ՋԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԹԵՋԻՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 1997

Տպագրվում է Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի և
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ

*Խմբագիրներ՝ ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐՅԱՆ*

THE GOLD OF ANCIENT ARMENIA
Republican Scientific Session
Report Theses

*Editors: A.KALANTARYAN
B.ASATRYAN*


ДРЕВНЕЕ ЗОЛОТО АРМЕНИИ
Республиканская научная сессия
Тезисы докладов

*РЕДАКТОРЫ: А.А.КАЛАНТАРЯН
Б.А.АСАТРЯН*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պ. Ավետիսյան.- Ոսկին բրոնզեդարյան Հայաստանի պատմամշակութային համատեքստում.....	4
Ս. Դևեջյան.- Ոսկե զարդերի հմայական-պաշտամունքային էությունը մ.թ.ա. 2-1-ին հազ. (ըստ Լոռի բերդի նյութերի)	7
Ա. Զոհրաբյան.- Արաբական ոսկե դրամների տեղը 7-13-րդ դդ. Հայաստանի դրամաշրջանառության մեջ.....	9
Ա. Ժամկոչյան.- Միջնադարյան Հայաստանի ոսկեթել գործվածքները.....	11
Է. Խանգադյան.- Մեծամորում հայտնաբերված ոսկե իրերը.....	12
Ժ. Խաչատրյան.- Հայաստանի անտիկ շրջանի ոսկե մատանիները..	13
Ն. Հակոբյան.- Դվինի ոսկե առարկաները	16
Ս. Հարությունյան. — Ոսկին հայ հին գրավոր ու բանավոր ավանդության մեջ.....	18
Ս. Հմայակյան.- Դիաուեխի երկրի ոսկեհանքերի շուրջ.....	21
Հ. Մելքոնյան.- Ոսկին հայ միջնադարյան աղբյուրներում.....	23
Լ. Պետրոսյան — Լճաշենի ոսկին	25
Հ. Պետրոսյան — Լույսը և ոսկին Գրիգոր Լուսավորչի տեսիլքում.....	26
Ա. Փիլիպոսյան - Ոսկու տարանցիկ առևտուրը Հին Արևելքում և Հայկական լեռնաշխարհում.....	28
Ա. Քալանթարյան — Հայաստանի ոսկու հանքերը միջնադարում.....	31
Ֆ. Տեր-Մարտիրոսով - Երկու հայտնաբերում անտիկ Շիրակավանից.....	32
Ա. Գևորգյան, Մ. Զալիբեկյան.- Հին Հայաստանի ոսկու հանքերի շահագործումը.	33

84442



ОГЛАВЛЕНИЕ

П. Аветисян — Золото в историко-культурном контексте Армении эпохи бронзы.....	4
С. Деведжян — Культовое значение золотых украшений во II-I тыс. до н.э. (по материалам Лори Берда)	7
А. Зограбян — Место арабских золотых монет в монетном обращении Армении в VII-XIII вв.....	9
А. Жамкочян — Золототканые одеяния в средневековой Армении.....	11
Э. Ханзадян — Золотые предметы из Мецамора.....	12
Ж. Хачатрян — Золотые перстни античной Армении.....	13
Н. Акопян — Золотые изделия из Двина.....	16
С. Арутюнян — Золото в древнеармянской письменной и устной традиции.....	18
С. Амаякян — О месторождениях золота в стране Дияуехе....	21
У. Мелконян — Золото в средневековых армянских источниках.....	23
Л. Петросян — Золото Лчашена.....	25
Г. Петросян — Свет и золото в видении Григора Лусаворича...	26
А. Пилипосян — Транзитная торговля золота на Древнем Востоке и Армянском Нагорье.....	28
А. Калантарян — Месторождения золота Армении в средневековье.....	31
Ф. Тер-Мартirosов - Две находки из античного Ширакавана...	32
А. Геворкян, М. Залибекян — Древняя золотодобыча в Армении.....	33

CONTENTS

P. Avetisyan - Gold in the Historic-Cultural Context of the Bronze Age Armenia	4
S. Devedjyan - The Cultist -Enchanting Nature of Jewellery 2-1 millennium B.C. (based on the data of Lori Berd)	7
A.Zohrabyan - The Place of Arabic Gold Coins in Armenian Numismatology of 7-13 centuries	9
A.Jamkochyan - Gold-threaded Knitting in Medieval Armenia	11
E.Khanzadyan - Golden Objects Found in Metsamor	12
J.Khachatryan - Golden Rings of Armenia in Antiquity.	13
N.Hakobyan - Golden Objects from Dvin	16
S.Haroutunyan - The Gold in Ancient Armenian Oral and Written Tradition	18
S.Hmayakyan - Towards the Gold Mines of Diauekhi Country	21
H.Melkonyan - The Gold in Medieval Armenian Sources	23
L.Petrosyan - The Gold of Lchashen	25
H.Petrosyan - Light and Gold in the Vision of Gregory the Illuminator	26
A.Piliposyan - Armenian Highland and Transit Trade of Gold in Ancient East	28
A.Kalantaryan - Armenian Gold Mines in Medievals	31
F.Ter-Martirosov - Two Findings From Antique Shirakavan	32
M.Zalibekyan, A.Gevorkyan - Mining of Gold in Ancient Armenia	33

ՈՍԿԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Երկրաբանական միջավայրի յուրացման և մետաղի առանձին տեսակների «սոցիալականացման» գործընթացներում ոսկին ունի բացառիկ ճակատագիր: Արտադրական կիրառման համար «անօգուտ հատկանիշներով» օժտված այս մետաղը մշակութային բազմաշերտ ոլորտները ներթափանցելու իր կարողությամբ, հավասարը չունի մարդուն շրջապատող երկրաբանական իրողությունների մեջ: Կենսագործունեության հոգևոր և աշխարհիկ ոլորտներում՝ անվանական, այլաբանական, գեղագիտական, արժեքաբանական բացառիկ չափանիշի վերածված այս ֆենոմենի պատմությունը տեսանելի է քաղաքակրթության սկզբնափուլերից: Այս ֆենոմենի հավաքական դերի արժեքավորման համար առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում ոսկու հասարակայնացման կարգընթացի տարածական և ժամանակագրական դրսևորումների ուսումնասիրությունները:

Առաջավոր Արևելքի համապատկերում՝ հնամշակութային առանձին դրվագների վերակազմություններն ըստ հնագիտական մշակույթների ու դարաշրջանների, լեռնաշխարհում ոսկու փաստագրումները, առկա ծավալների առադրումներն ու ռճապատկերագրական առանձնահատկությունները, մ.թ.ա. 3-1-ին հազարամյակների արձանագիր վկայությունները թույլ են տալիս բրոնզ-երկաթի դարաշրջաններում տարածաշրջանի ոսկու պատմության մեջ առանձնացնել երկու հիմնափուլ: Ըստ այդմ, առաջին փուլը ժամանակագրել ենք մ.թ.ա. 3600 – 2300/2100 թթ., որի պատմությունն ուրվագծվում է այսպես կոչված ուրուկյան և կուր-արաքսյան «էքսպանսիաների» վերլուծության համատեքստում: 2-րդ փուլը ժամանակագրել ենք մ.թ.ա. 2300/2100-800 թթ.: Այս փուլի պատմությանը կարելի է հետևել վերակազմությունների երկու հատվածներով: Ոսկու պատմության առաջին ենթափուլն անմիջականորեն շաղկապված է «Թռեղք-վանածորյան» հնամշակութային իրողությունների և Աշշուր-Կամիշ տարանցիկ առևտրի ծաղկման շրջանի հետ: Ոսկու ծավալման 2-րդ ենթափուլը (մ.թ.ա. 15-9 – րդ դդ.) աղերսվում է հնամշակութային մոր երևույթների (Լճաշեն-Մեծամորյան տիպի) կայացման ու զարգացման գործընթացներին:

Հատկանշական է, որ Հայաստանյան ոսկու պատմության այս փուլը միանշանակ շաղկապվում է տարածաշրջանում շրջադարձային խոշորամասշտաբ փոփոխությունների հետ: Այս

հանգամանքը պարտադիր անհրաժեշտություն է դարձնում՝ ոսկու «ծավալման և հասարակայնացման» գործընթացները վերլուծել մշակութային յուրահատուկ գործոնների համատեքստի շրջանակներում: Այս առումով հատկապես կարևորել ենք ոսկու «սրբազնացման» և «գեղարվեստականացման» սկզբունքներին առնչվող հիմնահարցերը:

Լեռնաշխարհում . ոսկյա իրերը քանակական անսխառեպ ծավալներով փաստագրվում են «Թռեղք-վանաձորյան» մշակույթին՝ վերագրվող դամբարաններում, որոնք նշանավորում են սոցիալական ներհակության արմատավորման գործընթացները տարածաշրջանում: Հարկ է նշել, որ այս կամ այն հնամշակութային տարածաշրջանի (Միջագետք, Արևմտյան Անատոլիա, Կենտրոնական Անատոլիա, Հայկական Լեռնաշխարհ, Այսրկովկաս) սոցիալական լանդշաֆտում, կտրուկ փոփոխությունների հետ համատեղ (կառավարման սոցիալական տեխնոլոգիաների արմատավորում), ի հայտ է գալիս ոսկին և նրա դերը կանխորոշված է առանձնահատուկ արժեվորման օբյեկտ լինելու պարագայով: Հնագիտական այն հուշարձանները, որոնցում փաստագրվել են Առաջավոր Արևելքի ոսկու հայտնի հավաքածուները, նշվածի լավագույն վկայությունն են:

Առարկաները, որպես խորհրդանշաններ ակտիվորեն կիրառվել են սոցիալական ստրատեգիայում՝ պայմանավորված գաղափարախոսական կառույցներով և խորհրդանշական կոդերով (արարողակարգված և «առասպելաբանված» համակարգեր): Ի տարբերություն այլևայլ նյութերից պատրաստված խորհրդանշանների, որոնք գոյություն ունեն կենսագործունեության ինստիտուտավորման բոլոր համակարգերում, ոսկին կիրառվում է հատկապես այն դեպքում, երբ մշակութային որևէ տարածաշրջանում «կառավարման սոցիալական տեխնոլոգիան» գործում է կենտրոնացված և հիերարխիկ համակարգի շրջանակներում:

Հնագիտական համալիրներից հայտնաբերված ոսկուց (մալ արծաթից) և այլ նյութերից պատրաստված խորհրդանշանների՝ տարբեր առումներով համադրությունները ցույց են տալիս, որ վերջիններս որոշակի գաղափարի առարկայական նյութականացման խնդրին են ծառայել (արժեվորվել է արտեֆակտի ձևը), իսկ ոսկին ներկայացնում է այդ գաղափարի հիմքը և սրբազան էությունը (արժեվորվել է արտեֆակտի պատրաստման համար նախընտրած նյութը):

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ ոսկու իմաստավորման (սեմիոտիզացման) մեխանիզմները փորձել ենք մեկնաբանել Թռեղք-վանաձորյան իրողությունների շրջանակներում տեսանելի «սոցիալական պատկերի» ու դիցաբանական համակարգի հետ շաղկապված: Ցանկացած ժամանակահատվածի համար նման

գործընթացները հատկանշվում են «աստվածություն-հերոս-արքա» առասպելաբանված եռյակ միասնությամբ: Այս եռամիասնությունը սահմաններում դիցաբանական համակարգերի ծնավորման մեխանիզմները շարժում են, որն ինքնին կանխորոշում է խորհրդանշանների շարժունակությունը: Այն, ինչ խորհրդանշում է աստվածությունը, համապատասխանեցվում է հերոսականին կամ արքայականին: Այս առումներով, խեթական, հուրական, հնդկական տարբեր ծեսերի և Թռեղք-վանածորյան թաղման ծեսի տիպաբանական նույնականությունները թույլ են տալիս թռեղքյան մշակույթում տեսնելու «աստվածություն-արքա-ոսկի» զուգորդությունների իմաստաբանական համարժեքությունը:

Հիմնականում «արևային մոտիվներով» խորհրդանշված թռեղքյան մշակույթի ոսկին (ոսկու սուբստանցային սակրալության արժեվորումը պատկերագրության լեզվում՝ գեղարվեստականացման հոգևոր մեկնակետը) թաղման յուրաքանչյուր արարողակարգում կերպարա-բովանդակային միասնությամբ շաղկապվելով ծիսական տեքստին, մատնանշում է մնջեցյալի (=արքային=արևի աստծուն) տիեզերական դիրքը, այն է՝ մնջեցյալը հարաբերակցվում է «Աշխարհի կենտրոնին»: Արքան հաղորդակից է աշխարհի կենտրոնին ու կարգին, մարմնավորում և անձնավորում է այն, իսկ ոսկին խորհրդանշում է ինչպես աշխարհի կենտրոնն ու կարգը, այնպես էլ՝ արքային:

Gold in the Historic-Cultural Context of the Bronze Age Armenia

P. Avetisyan
IAE

There are two stages that may be specified in the history of gold for the turn of Bronze - Iron eras in Armenian land. Extraction of gold and its evolving in the region in the first stage (3600-2300/2100 B.C.) is observable in the context of analysis of the Uruk and Kur-Araks "expansions" of Mesopotamia. Next stage (2300/2100-800 B.C.) is linked to the stage of thriving of a Trekh-Vanadzor culture, transit trade in Asia Minor, as well as to formation and development of archeo-cultural realities of a Lchashen-Metsamor type since the 15th century B.C.

The typological identity of various Hittite, Greek, Indian rites and Trekh-Vanadzor burial rite and synthesis of their certain episodes allow to observe circumstance of semantic equivalence in matching the "Deity-King-Gold" parallels. As the case, we've tried to have original stages of sacramentalism and "fincartness" of gold interpreted in Trekh-Vanadzor realities so as to see it linked to the "social landscape" and mythologized imaginations.

ՈՍԿԵ ԶԱՐԴԵՐԻ ՀՄԱՅԱԿԱՆ - ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ
ԷՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. II - I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ
(ըստ Լոռի բերդի մյուսերի)

Վաղագույն հասարակությունների մեջ ապրող մարդու համար մեծ դեր են խաղացել հմայական պատկերացումները: Լինելով բնապաշտ, նրանք իրենց գոյությունն ու բարօրությունը կապել են տիեզերքի և բնության երևույթների հետ, սրբագործելով և արտահայտելով այն իրենց ստեղծած առարկաների վրա: Դրանք, իրենց մարմնավորումն են գտնում նաև ոսկերչական արվեստի ստեղծագործությունների մեջ: Թանկարժեք մետաղներից գեղարվեստական այդ առարկաները պատրաստվում էին հասարակության բարձր խավերի համար: Այդ դասի մեջ էին մտնում նաև քրմերը, որոնք իրենց պահպանակների գերբնական ուժով հնարավոր էին համարում կապ հաստատել տիեզերական ուժերի և աստվածների հետ: Ոսկին և ոսկերչությունն ինքնին, հների պատկերացմամբ, հմայական հատկություններ ունեին: Ոսկին սրբագործված իշխանության խորհրդանշաններից էր և հիմնականում կապված էր արևի պաշտամունքի հետ:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակից սկսած, տիեզերքի երեք ոլորտների խորհրդանշաններն ու պատկերները կարելի է տեսնել Հայաստանի ինչպես հմայիկ-պահպանակների, այնպես էլ առօրյա զգեստի, գլխի հարդարանքի հետ կապված առարկաների վրա:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի ոսկերչական արվեստի զարդաձևերի հիմնական մոտիվը արևն է՝ իր բազմազան դրսևորումներով: Այդ պատճառով էլ երկրաչափական տարբեր ձևերի հիմքում ընկած է քառամասնությունը, համաչափությունը, որն ի վերջո հանգեցնում է հավասարաչափ, քառաթև խաչի՝ արևի ամենապարզ խորհրդանշանի, դառնալով նախնադարյան արվեստի պատկերագրության հիմնական տարրը: Պարույրը՝ արևի մյուս խորհրդանիշը, իր տարածն դրսևորումներով, ինչպես նաև արևի շրջանաձև, ներսում կետով արտահայտված նշանները, չափազանց արխայիկ պատկերներ են և իրենց ակունքներով հասնում են մինչև մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակները: Մեծապես կիրառվում են նաև եղևնաձև գաղղերը, որոնք արտահայտում են ցորենի հասկի և բույսի գաղափարը:

Վերոհիշյալ պատկերներն են կրում Լոռի բերդի ոսկե և արծաթե շքասեղների գլխիկները, պարուրածն արծաթե ուլունքը, Օծունի մեղալիոնը և այլն:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին, ոսկերչական արվեստը նկատելի վերելք է ապրում: Ավանդական պատկերանշանները զուգորդվում են նոր զարդաձևերով՝ վարդյակներով, բեկյալներով,

աստղանշաններով, որոնք բուսական աշխարհի և տիեզերական մարմինների խորհրդանշեր են: Դրանք տեսնում ենք Լոռի բերդի ուշ բրոնզեդարյան կախիկների, ուլունքների, շքասեղի և այլ զարդերի վրա: Ամենահետաքրքրականը սակայն, արծաթե պահպանակն է, որը ներկայացնում է իզական երկվորյակ մի աստվածություն՝ կուռքի մոդել, կապված տիեզերքի տարբեր հորիզոնների և երևույթների՝ երկնքի, երկրի, արևի և ամծրևի հետ: Պահպանակը, հների պատկերացմամբ, ի զորու էր նպաստելու երկրի, հողի արգասաբերությանը, մարդու բարօրությանը: Այն համեմատվում է արևելքի վաղ երկրագործական մշակույթների, Կիլիկիայի և փոքրասիական, իզական սկիզբ ունեցող կուռքերի հետ, ինչպես նաև Շենգավթի պահպանակի, Մեծամորի կուռքի, Դվինի մեհենական բազիլիկների և այլ հուշարձանների հետ: Քարե ուլունքաշարերի կենտրոնում գտնված զորեղ պահպանակը իր կրծքին է կրել Լոռի բերդի երբեմնի քուրմը, որը կարող էր միաժամանակ ցեղային առաջնորդ լինել:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջում և մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբներում ոսկերչության արվեստը որոշ անկում է ապրում, որպեսզի նորից վերածաղկի մ.թ.ա. 8-6-րդ դարերում՝ շնորհիվ հին, ավանդական ոսկերչության մեջ նորամուտ ազդեցությունների: Այստեղ շարունակում է տիրապետել խաչի գաղափարը, որը որոշ ուսումնասիրողներ համարում են հայկական միջավայրի արտահայտություն և ցույց են տալիս նրա ազդեցության շրջանակները: Այս ժամանակաշրջանում հանդես են գալիս ուրարտական արվեստի ազդեցությամբ ստեղծված զարդեր: Պաշտամունքային, հմայական իրեր են համարվում ոսկե չորս քունքազարդերը, որոնք կրում են ֆալլատիպ վերադիր պատկերներ՝ արտահայտելով արգասավորման և պտղաբերության գաղափարը:

Այսպիսով, Հայաստանի (Լոռի բերդի) հնագույն ոսկերչական արվեստի նմուշներն, իրենց էության մեջ կրում են նաև կրոնապաշտամունքային իմաստներ:

The Cultist - Enchanting Nature of Jewellery

2-1 millennium B.C.

(based on the data of Lori Berd)

S. Devedjyan

IAE

The magical and enchanting notion had an essential role for the people living in antique society. It had its reflection in the jewellery art. To antique people gold and jewellery on the whole had magic features. Gold symbolized sanctified dominance and basically was connected with sun-cult. The main motive in jewellery pattern during 2 millennium B.C. was sun with its various reflections.

In the second half of 2 millennium B.C. the jewellery art had an considerable ascension. Traditional characters were conjoined with new patterns. At the end of 2 millennium B.C. and at the beginning of I millennium B.C. there was recession in art of jewellery that was revived during 8-6 centuries. During that period adornments having the influence of Urartu art appeared. Ancient jewellery art has a religion- cultist nature.

ԱՐԱՔԱԿԱՆ ՈՍԿԵ ԴՐԱՄՆԵՐԻ ՏԵՂԸ 7 - 13 ԴԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՃ

7-րդ դարի վերջում Օմայան Աբդլմելիք խալիֆի բարեփոխումից հետո Հայաստանի դրամաշրջանառության մեջ նոր փուլ է սկսվում՝ կապված արաբական նոր դրամակշռային համակարգի հանդես գալու հետ: Արաբական խալիֆաթը, ելնելով կայսրության տարածքային առանձնահատկություններից, միավորեց մախկին բյուզանդական նահանգների ոսկու և Իրանի արծաթի ստանդարտը մի համակարգի մեջ՝ միաժամանակ պահպանելով դրանց շրջանառության ավանդական սահմանները: Հայաստանի տարածքից հայտնի է միայն մեկ Օմայան ոսկե դրամ՝ գտնված Դվինից (ՀՀ ԿՔ, քաշը 4,25 գրամ, տր. 21 մմ, թողարկված 124 թ.հ. 741/42 թթ.):

Աբասյան անանուն դինարների ևս մեկ օրինակ է հայտնի, գտնված Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղում (ՀՊՊԹ 17949, քաշը 4,2 գրամ, տր. 21 մմ, թողարկված 135թ.հ.):

9-րդ դարի կեսերից, Արաբական խալիֆաթի թուլանալու հետ մեկտեղ, հանդես են գալիս նոր ինքնուրույն տերություններ, որոնց թվում նաև՝ հայ Բագրատունիների թագավորությունը: Միաժամանակ Բաղդադի կողմից Հայաստանում կուսակալներ են նշանակվում Սաջյան ամիրաները: Սաջյան Յուսուֆը, որը կառավարիչ էր նշանակվել Մուքթադիր խալիֆի կողմից, թողարկում է ոսկե և արծաթե դրամներ իր նստավայր Բարդայրում (Պարտավ) և Դվինում: Դվինի ոսկե դինարների վրա, որպես թողարկման վայր նշվում էր ամբողջ վարչական միավորի անունը՝ «Արմինիա»: Յուսուֆի ոսկե դրամները հազվագյուտ են հանդիպում և չէին կարող բավարարել շուկայի պահանջները:

«Արմինիայի» հիշատակումը դրամների վրա ուներ քաղաքական մեծ իմաստ, ցույց տալու, որ չնայած Բագրատունիների առկայությանը, Հայաստանի կառավարիչը շարունակում էր մնալ Յուսուֆը: Հայաստանից գտնվել է Յուսուֆի մեկ ոսկեդրամ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղում (ՀՊՊԹ 13575, քաշը 3,8 գրամ, տր. 21 մմ) թողարկված 298 թ.հ. 910/11թթ. Բարդայրում: Մեկ ոսկե դրամ՝ թողարկված Մուքթադիր խալիֆի կողմից 299 թ.հ.(911/12թթ.) Ֆիլիսթինում (ՀՊՊԹ 2630, քաշը 4,25 գրամ, տր. 22 մմ), գտնվել է էջմիածնում:

Խալիֆաթի քայքայումը շարունակվում է նաև 11-րդ դարում, երբ կայսրության ամբողջ տարածքը մասնատվեց մանր տերությունների, որոնք ձեռք բերեցին նաև դրամ թողարկելու իրավունք: Ղա համընկավ «արծաթի ճգնաժամի» հետ, երբ արծաթե դրամը

դուրս գալով շրջանառությունից՝ իր տեղը զիջեց պղնձին: Այս ճգնաժամը աղետալի հետևանքներ ունեցավ ամբողջ դրամական տնտեսության համար մի տարածաշրջանում, որի հիմնական դրամական միավորը արծաթե դրամն էր: Հայաստանը նույնպես ընդգրկվեց այդ ճգնաժամի մեջ: Այդ պայմաններում, երբ շրջանառության մեջ հիմնականում պղնձե դրամներ էին, իսկ ոսկին բավարար քանակով չէր թողարկվում, միջազգային արժույթի դերը իր վրա է վերցնում բյուզանդական ոսկի դրամը՝ ուղղակի հեղեղելով Արևելքի շուկան:

12-րդ դարի վերջում Աբասյան խալիֆները վերականգնում են սեփական դրամների թողարկումը, որն ընդհատվել էր 10-րդ դարի վերջում: Այդ շրջանի դիմարների կշռային տատանումները, որոնք հասնում են մի քանի գրամի, հիշեցնում են պղնձե դրամների անկանոն, կշռային թողարկումները: Այսինքն կասկած չի մնում, որ դրամը օգտագործվում էին ոչ թե հատով, այլ՝ քաշով: Աբասյան ոսկե դրամների համեմատաբար մեծ խումբը գտնվել է Արագածոտնի մարզի Աշնակ գյուղում 1936 թ. (ՀԴՊԹ Դ 13598-13602) և վերաբերում է Աբասյան ան-Նասր (մեկ դրամ) և ալ-Մուսթասիմ (չորս դրամ) խալիֆների թողարկումներին: Դրամները թվագրվում են 13-րդ դարի առաջին կեսով և կտրված են Մեդինաթ ա-Սալամում:

Դրամների կշիռը տատանվում է 3,85 գրամից մինչև 8,6 գրամ:

Աբասյան վերջին խալիֆ ալ-Մուսթասիմի մեկ ոսկե դրամ գտնվել է նաև նույն մարզի Ոսկեվազ գյուղում, թողարկված է Մեդինաթ ա-Սալամում 646 թ.հ.(1248-49), քաշը 9,6 գր., տր. 28 մմ (ՀԴՊԹ 16283):

Այսպիսով, արաբական ոսկե դրամները, գտնված Հայաստանի տարածքից, հայտնի են եզակի օրինակներով և ցույց են տալիս, որ վերջինս գտնվել է արծաթե դրամների շրջանառության ոլորտում: Արաբական ոսկե դրամը, ունենալով զուտ հաշվարկային նշանակություն, էական դեր չի խաղացել Հայաստանի ապրանքադրամային հարաբերություններում:

The Place of Arabic Gold Coins in Armenian Numismatology of 7-13 centuries

A.Zohrabyan
SIMA

Monetary reform was implemented by Arab khalifat at the end of 7 century. It caused a new stage in the region on the whole including also the Armenian money turnover. Armenia remained in the sphere of silver turnover where the silver dirhem was a legal tender, and gold was used only for calculation.

Along with the collapse of khalifat at the end of 9 th century the governors of provinces earned a right to mint golden coins.

Sajian amira Yusuf ibn Dividad issued gold coins in the city of Dvin, by stating the place of issuance "Arminia".

The value of gold dinars of Abas was changed by its content at the end of 12 century and at the beginning of 13 century. Those coins remind the irregular issuance of copper coins that were used by weight and not by pieces.

Golden coins founded in Armenia are well known and they have an essential role in commodity relations in Armenia.

Աղավնի Ժամկոչյան
(ՀԱԻ)

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵԹԵԼ ԳՈՐԾՎԱԾՔԵՂԵՆԸ

Հայ ժողովրդի միջնադարյան մշակույթի հարուստ գանձարանում առանձնահատուկ տեղ ունի ոսկեթել գործվածքեղենը: Կիրառական արվեստի այս բնագավառը միջնադարում ընկալվել է ոսկուն և արծաթին համարժեք նյութեղեն առարկա և պատահական չէ, որ պատերազմների ժամանակ կազմել է հարուստ ավարի անբաժան մասը:

Ոսկեթել գործվածքների կիրառության փաստը հարուստ կենցաղի և ապրելակերպի դրսևորումներից մեկն էր: Այդ մասին հավաստի տվյալներ կան ոչ միայն մատենագրական սկզբնաղբյուրներում, այլև միջնադարյան քանդակագործության հուշարձաններում:

Քննարկվող նյութի կիրառության հաջորդ ասպարեզը Հայ Առաքելական եկեղեցին էր, ուր, հարուստ սպասքից հետո, որոշակի կիրառություն ունեին ոսկեթել հանդերձանքն ու վարագույրները:

Ոսկեթել գործվածքեղենի գյուտին քաջածանոթ էր հայ արվեստագետն ու այդ մասին ձեռագրերից մեկում (1402 էջ 10ա) պահպանված են դրա պատրաստման մանրամասները:

Հնագիտական պեղումներից մեզ հասած միակ նյութը Անիում Տիգրան Հոնենցի գերեզմանի մանկական քաղումից հայտնաբերված հարուստ գործվածքեղենն է (զգեստ, ոսկեթել զարդարանքներ, քող, ուլունքներ և այլն), որը ժամանակի հայ իրականության գեղագիտական ճաշակի ու հոգևոր նկարագրի պերճախոս վկան է:

Gold-threaded Knitting in Medieval Armenia

A. Jamkochyan
IAE

Gold-threaded knitting has its peculiar place in the reach treasury of Armenian medieval culture. This field of craftsmanship has been comprehended in medievales as a subject materially equal to the gold and silver, and no coincidentally it was part of pillage during wars.

A fact of usage of gold-threaded knitting proved to be a reflection of rich mode of life and way of living. Reliable data about this are available not only in bibliographic sources, but also in medieval sculpture monuments. The gold-threaded decoration and curtains were of certain use in ceremonies of Armenian Apostolic Church and in constructions' interior.

The Armenian craftsman was well aware of the invent of gold-threaded knitting; one of manuscripts (1402 page 10a) preserves of the secret of making such a knitting.

The only material from excavations in Ani is the knitting (dress, gold-threaded decorations, veil, beads, etc.) discovered in the tomb of Tigran Honents. This is an eloquent evidence of aesthetic and spiritual value of Armenian reality of that period.

Էմմա Խանգադյան
(ՀԱԻ)

ՄԵԾԱՍՈՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՈՍԿԵ ԻՐԵՐԸ

Հայկական լեռնաշխարհը հնագույն ժամանակներից հայտնի է եղել մետաղի բովերով և, բնականաբար, հանդիսացել է Հին Արևելքի մետաղի արդյունաբերության ծագման և զարգացման հնագույն կենտրոններից մեկը:

Վաղ բրոնզի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհը թևակոխում է տնտեսության ծաղկման, բարգավաճման, արհեստների զարգացման, քաղաք-պետությունների առաջացման ժամանակաշրջան:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Մեծամորը խոշոր կենտրոն էր, ուներ միջնաբերդ՝ պաշտպանված կիկլոպյան պարսպով և նրանից դուրս՝ մոտ 30 հա տարածք զբաղեցնող բնակավայր:

Մեծամորցիները դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակից սկսած զբաղվել են ոսկերչությամբ, որի լավագույն ապացույցներից մեկը մանկան դամբարանում հայտնաբերված պարուրած և հյուսվածքով հերազարդն է: Վերջինիս հետ հայտնաբերված խեցեղենը հնարավորություն է ընձեռում այն թվագրելու մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսով:

Հավանաբար վաղ ավանդույթ ունի Մեծամորի ամրոցում հայտնաբերված ոսկյա ուլունքներ ծուլելու կաղապարը: Այն գտնվել է կարմիրբերդյան մշակույթին բնորոշ միջավայրում: Սակայն հայտնի է, որ կարմիրբերդյան հուշարձաններում ոսկե իրեր դեռևս չեն հայտնաբերվել: Բացի այդ, կաղապարի գնդաձև ուլունքներն իրենց անմիջական զուգահեռն ունեն Ալաջա-Հույուկի մ.թ.ա. 2500 – 2000 թթ. ծուլման եղանակով պատրաստված ոսկե վզնոցում:

Արվեստի լավագույն նմուշների շարքը կարող են դասվել Մեծամորի թիվ 60 դամբարանում հայտնաբերված ոսկե զարդաբուրմ մեդալիոնները:

Ոսկերչությունը զարգացման բարձր մակարդակի է հասնում վաղ երկաթի դարաշրջանում (մ.թ.ա. 12-րդ դ.վ. - 9-րդ դ.): Մեծամորը ներկայանում է որպես եթիունյան հարստության արքունի քաղաքներից մեկը:

Մեծագարն ազնվականների դամբարանաբլուրներում հայտնաբերված իրերը՝ բզեզաձև, անիվատիպ, լուսնի մահիկանման

մեղալիոնները, բազմաթիվ կախիկները, զարդարուն և անզարդ ուլունքները, մանր ու մեծ զարդերը, շքասեղը, ոսկյա այլ իրերը, ամրոցում հայտնաբերված ոսկե գլաններն ու պերճանքի առարկաների կաղապարը վկայում են ոսկեղենի տեղական արտադրության փաստը:

Ոսկերիչները լավ ծանոթ էին ինչպես ծուլման, այնպես էլ մածուցելու, գամելու տեխնիկային, արծաթի վրա ոսկու ապլիկացիայի ստացման եղանակին, որի լավագույն օրինակներից մեկը Մեծամորի 9-րդ դամբանաբլուրում հայտնաբերված արծաթե զարդարուն գոտու կենտրոնում՝ առյուծազարդ ոսկե նուրբ թիթեղի ապլիկացիան է:

Առաջավորասիական և հարևան երկրների հետ ունեցած սերտ համագործակցության կողքին, Մեծամորում հայտնաբերված որոշ իրեր, հատկապես առյուծազարդ գոտին, այնուամենայնիվ հաստատում են նրանց ուրույն, տեղական ծագումնաբանական հատկանիշները:

Golden Objects Found in Metsamor

E.Khanzadyan
IAE

In the 3rd millennium B.C. Metsamor used to be a major dwelling area, citadel surrounded by massive walls of Cyclopean masonry, and a territory overspread out on about 30 hectares. At earlier Bronze Age dwellers of Metsamor were engaged in the goldsmith's art and one of proofs of this is a spiral-woven hair ornament discovered in a child's tomb, a shape for casting of beads discovered in the fortress, three ornamented medallions of late Bronze Age.

The goldsmith's art has reached higher levels in the crown town Metsamor of Ethiunian Dynasty in 12-9 centuries B.C. The medallions having appearance of the maybug, wheel, moon, numerous hooks, beads, rollers, a hold for luxury stuff so discovered in tombs of high nobility witness local manufacturing of the goldware. The goldsmiths were well aware of both casting and smelting, nailing techniques, as well as mode of receiving gold application on a silver. One of best examples of that is the lion-ornamented belt.

In line with evidences marking close relationships with the Front Asia and neighbouring countries, some objects discovered in Metsamor affirm their local characteristics.

Ժորես Խաչատրյան
(ՀԱԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆԻ ՈՍԿԵ ՄԱՏԱՆԻՆԵՐԸ

Ոսկերչությունը անտիկ շրջանի զարգացած արհեստներից մեկն էր: Ոսկին և ոսկուց պատրաստված իրերն ու առարկաները մեծ դեր էին խաղում մարդու կյանքում: Ոսկին ոչ միայն թանկարժեք մետաղ էր, այլև յուրօրինակ սրբություն: Ոսկուն վերագրվում էր

աստվածային ծագում: Անահիտը կոչվում էր Ոսկեծին ոսկեմայր, Ոսկեհատ դիցուհի (Ազաթ., 809): Հաճախ ոսկու հմայական առանձնահատկությունները և կիրառական նշանակությունը համատեղվում էին: Որոշակի ոսկյա զարդեր կրելը կամ իրեր օգտագործելը կապվում էր տվյալ անձնավորության պաշտոնի ու դիրքի հետ (Մ. Խորենացի, 2-րդ, 47): Հելլենիստական և ուշ անտիկ շրջանում հատուկ կնիքով ոսկե մատանին թագավորական իշխանության խորհրդանշներից մեկն էր: Ոսկե մատանիները ժամանակի ընթացքում ձևափոխությունների են ենթարկվել:

Մ.թ.ա. 5-4-րդ դարերում են ստեղծվել շարժական սկարաբեոհդով (բզեզաձև) մատանիները, իսկ մ.թ.ա. 4-րդ դ. վերջին տեղի է ունեցել մատանու և քարի միաձուլում: Գեման ագուցվում է վահանակի մեջ և շարժական քարով մատանիները վերանում են: Սակայն, ինչպես նախորդը, այնպես էլ վերջինը խոշոր էին, ծանր և մատին կրելու համար անհարմար: Ոսկերիչների ստեղծագործական որոնումների շնորհիվ դրանք աստիճանաբար փոքրանում են և վահանակը դառնում է տափակ:

Մ.թ.ա. 1-ին դ. կեսերին ոսկերչական տեխնիկայի կատարելագործման շնորհիվ հանդես են գալիս սնամեջ, թեթև մատանիներ, որոնք պատրաստված էին բարակ թիթեղից, դրոշմման և զոդման եղանակով և որին քարն ագուցվում էր վերին մասի բացվածքում: Նման մատանիներն ու ակամջօղերը լայն տարածում են ստանում ամբողջ ամսիկ աշխարհում մ.թ. 1-3-րդ դդ.: Այդ շրջանում երևան են գալիս նաև թիթեղից և տափակ լարից պատրաստված նրբագեղ մատանիների այլ ձևեր, որոնց հարուստ հարդարանքը օրգանապես լրացնում և ամբողջացնում էր մտահղացումը:

Հայաստանում մեզ հայտնի ամենավաղ մատանիները արծաթից են, պատկանում են մ.թ.ա. 2-րդ դ. և գտնվել են Գառնիից: Ոսկե մատանիներ հայտնաբերվել են Սիսիանից, Գառնիից, Աշնակից, Վարդաձորից և այլ վայրերից: Սիսիանի ոսկե մատանիները չորսն են, մեկը շարժական վահանակով է, որի մեջ ագուցված է ալմանդին: Այն ցույց է տալիս, որ շարժական վահանակով մատանիները վերապրուկային ձևով գոյատևում են մինչև մ.թ.ա. 1-ին դ.: Մյուս երեքը՝ բարակ թիթեղից պատրաստված, սնամեջ մատանիներ են, մ.թ.ա. 1-ին դ. բնորոշ բարձր վերնամասով (քարերն ընկած են):

Գառնիի մատանին (1-ին դ.) պատրաստված է նույն եղանակով, բայց ավելի շքեղ հարդարանք ունի: Այն զարդարված է երեք սերդուլիկով, որոնց վահանակները շրջանակված են մանր հատիկներով: Մի քանի քարով նման մատանիների հարդարումը հանդես է գալիս մ.թ. 1-ին դարում և շարունակում գոյատևել մինչև վաղ միջնադար:

Աշնակի ոսկե մատանիները երկուսն են: Դրանցից մեկը հարուստ տեսք ունի, պատրաստված է երկու տափակ և մեկ, սեղմման

եղանակով արված, կեղծ հատիկավոր լարից: Հարդարված է փոքրիկ, ուռուցիկ նոնաքարով և չորս հատիկից բաղկացած բրգածն զարդով (2-րդ դ.): Նման բրգածն զարդերը Անդրկովկասում հանդես են գալիս ուշ հելլենիստական շրջանում և տարածում են ստանում ուշ շրջանում: Երկրորդ մատանին ավելի պարզ ձև ունի, պատրաստված է ժալպվեմածն քիթեղից, հարդարված է փոքրիկ վահանակի մեջ ագուցված ուռուցիկ նոնաքարով (3-րդ դ.): Այն իր զուգահեռներն ունի Անդրկովկասում:

Վարդաձորի ոսկե մատանիները երկուսն են, ինքնատիպ ձևի: Պատրաստված են հաստ քիթեղից, ունեն շեշտված ուսեր, բարձր վահանակ: Դրանցից մեկի վահանակի մի կողմում զոդված է գնդիկ: Մատանու այդ ձևը հայտնի է Անդրկովկասում և հանդես է գալիս 3-րդ դ. վերջին, 4-րդ դարում: Վահանակի մի կողքին ամրացված գնդիկով մատանիները տարածում են ստանում 4-5-րդ դարերում: 4-5-րդ դդ. ոսկե այդպիսի մատանիները ավելի կոպիտ են և պարզ: Այդ ժամանակի մի մատանի հայտնաբերվել է Կարմրաքարից, երկու հատ էլ պահպանվում է Հայաստանի պատմության թանգարանում: Նման մի մատանի, սասանյան մեծատոհմիկի պատկերով, պահվում է Երմիտաժում (4-5-րդ դդ.):

Հայաստանից հայտնաբերված մատանիները ցույց են տալիս ժամանակի ընթացքում դրանց կրած ձևափոխությունները, որոնց թվագրության ճշգրտումը կարևոր է ոչ միայն ոսկերչության տեխնիկայի զարգացման ընթացքը ցույց տալու, այլև մյուս նյութերի կիրառման ժամանակը որոշելու համար:

Ուշ հելլենիստական շրջանում ոսկերչության մեջ տեղի ունեցած նորամուծությունները հանգեցրին աշխատանքի նոր բաժանման, ավելի նեղ մասնագիտացման: Հանդես եկան առանձին մատանի պատրաստողներ, գեմաներ փորագրողներ և այլն:

Golden Rings of Armenia in Antiquity

J.Khachatryan

IAE

Goldsmithing was one of developed crafts in antiquity. Not only the gold was a precious metal, but rather considered as bearer of magic characteristics. Often magic features of the gold and its application were combined. In Hellenic and late antiquity period, a gold ring with special seal was one of the symbols of the royal power.

Golden rings, found in Sisyan, Garni, Ashnak, Vardadzor and other regions show differences, which took place since I century B.C. through I century AD, and forms, which are closely connected with improvement of goldsmith technique. Chronological accuracy of rings is important not only for showing the process of development of goldsmith technique, but for determining the term of use of other substance as well.

In late Hellenist period, innovation in goldsmithing resulted in new labour division, with narrower specialization.

ԴՎԻՆԻ ՈՍԿԵ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Միջնադարյան Դվին քաղաքի տարածքից հայտնաբերված մեծաքանակ և բազմաբնույթ հնագիտական գտածոներում առանձին խումբ են կազմում ոսկե առարկաները, կերտված տեխնիկական ամենաբարդ հնարներով և դրանց համահունչ համադրությամբ՝ հաղորդակ ժամանակի մշակութային կյանքի տեղաշարժերին, նորաձևության և պերճանքի պահանջներին:

Գտածո ոսկե առարկաները գերազանցապես վերաբերում են պերճարվեստին: Դրանք զանազան տիպի զարդեր են՝ մատանիներ, մանյակներ, ապարանջաններ, գինդեր, կախիկներ և այլն, ընդելուզված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով:

Ջարդերի մեջ ամենատարածվածը և ամենահարգին մատանիներն են, որ կրում էին հասարակության բոլոր շերտերը՝ ըստ դիրքի ու կարողության: Ժամանակի ընթացքում սովորական զարդից այն վերածվում է հոգևոր և աշխարհիկ բարձրագույն իշխանության նշանակի, կապի ու միության (ամուսնության) խորհրդանշի:

Մատանիներ պատրաստել են ոչ միայն թանկարժեք և կիսաթանկարժեք մետաղներից, այլև ապակուց, բոլոր ազնիվ քարատեսակներից և ոսկորից:

Մատանիների ձևերի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք եղել են.

1. Ակնաբնով մատանիներ
2. Ակնաբնով կնիք-մատանիներ
3. Վահանակով մատանիներ:

Կնիք-մատանիները գերազանցապես պատրաստում էին ազնիվ մետաղներից (ոսկի, արծաթ), ընդելուզված թանկարժեք քարերով (լալ, նռնաքար, ալմանդին, սարդիոն և այլն), հաճախ էլ առանց ակնախորշի ու քարերի: Ակնաբնի կամ վահանակի վրա փորագրվում էին զանազան զարդապատկերներ, գինանշաններ, թռչուններ, բուսական զարդանկարներ, երբեմն էլ անձը հավաստող գրություններ, օրհնանքի կամ մաղթանքի արտահայտություններ:

Ըստ մատենագրական վկայությունների, կնիք-մատանիները եղել են. արքայական, այդ թվում և վարազագիր, հայրապետական, անանցական, տանուտերական, սեպուհական և սովորական:

Լինելով պատվական ու տարածված զարդ, ապարանջան կրել են բոլորը՝ անկախ դիրքից ու տարիքից: Ժողովուրդը ինչպես մատանիներին, այնպես էլ ապարանջաններին տվել է խորհրդավորության իմաստ: Այն իմաստավորել է դիրք, իշխանություն, հավատարմություն և նվիրվածություն:

Ապարանջաններն ըստ ձևերի բաժանվում են վիշապագլուխ և փակ ծայրերով (կենտրոնում շրջանակ) տեսակների:

Վիշապագլուխ ապարանջանները Հայաստանում հայտնի են վաղնջական ժամանակներից և, իբրև սիրված ոճ, ավանդույթի ուժով հասել են միջին դարեր:

Փակ ծայրերով ապարանջանների տիպը, ըստ զուգահեռների (Իրան, Միջին Ասիա), պատկանում է Մերձավոր Արևելքում լայն տարածում գտած «արքայական» ապարանջանների դասին:

Մանյակները կամ վզնոցները գլխազարդի համալիրի հարգի ու պատվական զարդերից են, որ կրում էին թագավորները, մեծանուն իշխաններն ու ազնվազարմ տիկնայք: Մանյակները լինում էին միաշար, երկշար, քառաշար, որոնք երբեմն իջնում էին մինչև կուրծքը, կամ էլ կիպ գրկում պարանոցը: Դվինից գտնվել է ցորենահյուս մանյակ, զարդարված փոքր գնդիկներով: Նրան արվեստով չի զիջում և երկրորդ մանյակը, կազմված բացված ծաղիկ հիշեցնող թերթիկներից, կերտված վերադիր զարդացանցի հնարանքով, ընդելուզված փիրուզե և մեղեսիկե քարերով:

Առավել նրբաճաշակ ու գեղակերտ են ուլունքները. երկուսը ցանցկեն, ուռուցիկ գնդաձև իրանով, մեկը կոնաձև՝ հարդարված վերադիր պարանահյուս զարդերով:

Գինդերը կամ ականջօղերը կանանց հարդարանքի բաղկացուցիչ տարրերից են և հայտնի հնագույն ժամանակներից: Որպես հուռուքք, ապա զարդ, ավանդաբար հասել են միջին դարեր: Գևորգ Երզնկացու վկայությամբ՝ գինդն էլ, ինչպես մատանին, կազմել է հարսանեկան զարդերի անբաժան մասը:

Դվինից գտնված գինդերը թվով 28-ն են, ամենամեծաքանակն ու բազմազանը ոսկե առարկաների մեր հավաքածուում: Ըստ ձևերի բաժանվում են. գնդաձև, տակառաձև, մահիկակերպ, կողովաձև, գլանաձև և այլն: Ականջօղերից մի քանիսը ընդելուզված են թանկարժեք քարերով՝ մարգարիտով և փիրուզով: Գինդերը, զարդ լինելուց բացի, մատնանշել են և աշխարհիկ բարձր իշխանություն, համարվել արքունական «պատվո» նշանակ:

Չարդարանքի առարկաների այս հարուստ հավաքանին կարելի է թվագրել 10-12-րդ դդ.:

Golden Objects of Dvin

N.Hakobyan
IAE

The gold ornaments crafted by the most complicated combinations stand apart in archaic foundings from the territory of the Medieval Dvin.

The adornment - rings, necklaces, bracelets, beads, ear-rings, hooks, hair-pins-dressed with precious and semi-precious stones, and ornamented with pet-shaped or array items, were borne by all strata of the society - relevant to position held and social status.

In the course of time the ornaments acquired a new status by becoming a sign of the spiritual and profane higher authority, a symbol of love and marital links, etc. Of all ornaments the most popular and practicable were the rings, especially in the form of seals which were called as royal in sources known to us.

The gold ornaments from Dvin according to the archaic stratum, technical implements and relevant parallels are referred to 10-12 centuries.

Սարգիս Զարությունյան
(ՀԱԻ)

ՈՍԿԻՆ ԶԱՅ ԶԻՆ ԳՐԱՎՈՐ ՈՒ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերեն *ոսկի* բառը ծագում է հնդեվրոպական *Hau-os / *Hu-os վերակազմված ձևից և համադրվում է շումերերեն guškin - «ոսկի» բառի հետ:

Ոսկի բառը հին ու նոր հայերենում կիրառվում է թե՛ որպես գոյական, թե՛ ածական, և՛ ուղիղ, և՛ փոխաբերական առումներով: Այն հին մատենագրությունից վկայված է բազմաթիվ բառաբարդությունների և ածանցված բառերի տեսքով (ավելի քան 110 մոտ):

Ուղիղ իմաստով բառաբարդությունների ճնշող մեծամասնությունը վերաբերում է ոսկերչական արհեստին, մասնավորապես՝ դրա արդյունք հանդիսացող ձեռակերտ տարբեր իրերի և առարկաների որակին, տեսքին, կիրառական հատկանիշներին և վկայում հին ու միջնադարյան Հայաստանում ոսկեկուռ ու ոսկեզարդ առարկաների հարուստ տեսականու առկայությունը և ոսկերչական արվեստի զարգացման բարձր աստիճանը:

Առանձնապես ուշագրավ են *ոսկի* բառով կազմված հնավանդ փոխաբերական բառաբարդությունները, որոնք, լինելով գեղարվեստական պատկերավորման միջոցներ, պատկանում են հին բանաստեղծական լեզվի ոլորտին: Այդ փոխաբերական բառաբարդություններում ոսկին իբրև ազնիվ, գեղեցիկ, փայլուն, թանկարժեք մետաղ վերածվել է իմաստության, մաքրության, ազնվության, գեղեցկության, շքեղության գաղափարներն արտահայտող պատկերավոր լեզվամիջոցի կամ խորհրդանիշի:

Ոսկի բառը զգալի դրսևորումներ ունի հայերենի անվանաբանության մեջ: Այդ բառով են կերտված հին տեղանուններից *Ոսկիք* տեղավայրի անունն ու *Ոսկեան* գետանունը Բագրևանդում, *Ոսկեանց* լեռը՝ Տայքում, *Ոսկիռդայ* ավանը՝ Գողթնում, *Ոսկի հանքը*՝ Տայքում և այլն: Նույն բառահիմքով ավելի քան երկու տասնյակ արական և իգական անձնանուններ կան վկայված միջնադարից (*Ոսկի, Ոսկեանք, Ոսկան, Ոսկեակ, Ոսկեհան, Ոսկեհատ, Ոսկեվան,*

Ոսկետիկին, Ոսկետունկ, Ոսկինար, Ոսկինամա ևն): Նույն բառով մի քանի դիցակիր մակդիրներ կան վկայված տակավին հեթանոսական ժամանակաշրջանից (Անահիտ դիցուհուն տրվող *Ոսկեմայր Ոսկեծին, Ոսկեհատ Ոսկեմայր* և Աստղիկ դիցուհուն տրվող՝ *Ոսկեծղի* != ոսկեբազուկ/ մակդիրները):

Ոսկին իր բառային և բառադարձվածային կազմությունների տարբեր առումներով լայն կիրառություն է գտել հայ հին և միջնադարյան բանաստեղծության մեջ և հատկապես ժողովրդական երգերում: Մասնավորապես խիստ պատկերավոր են ոսկի բառի մակդիրային կիրառությունները, երբ այն դրվելով որևէ գոյականի վրա, նորովի իմաստ է հաղորդում, դարձնում առավել հնչուն, գեղեցիկ և վերածում բանաստեղծական գունեղ և իմաստալից պատկերի (*տեղ ոսկի, «ոսկի անձրև», ոսկեօղ շիկափոկ պարան, ոսկի աթոռ, ոսկի լուծ, ոսկի կալ, ոսկի սեղան, ոսկի սինի, ոսկեկոր դանակ, ոսկի օրորոց, ոսկի բենռ, ոսկի ծիւ, ոսկի խնձոր* ևն):

Միջնադարյան հայրեններում և ուշ շրջանի ժողովրդական երգերում լայն դրսևորումներ են գտել կանանց, մասամբ և տղամարդկանց հանդերձանքի և արդուզարդի հետ առնչվող ոսկե կամ ոսկեփուռ զարդերը, հագուստն ու կապուստը, որոնք լինելով անցյալի հայկական տարազի կարևոր բաղադրիչներից, միաժամանակ հետապնդել են նաև բանաստեղծական նպատակներ՝ որոշակի չափազանցումներով գովաբանել և իդեալականացնել սիրած անձի արտաքին տեսքն ու հատկանիշները: Հագուստի տեսակներից հիշատակված են *ոսկի հանդերձ, ոսկի հալավ, ոսկի կապա, ոսկեկոծակ արխալուղ, ոսկեպատ շալ, ոսկի շուրջառ*. զլխի հարդարանքից՝ *ոսկե թագ, ոսկի ջղա, ոսկեզարդ ֆաս, ոսկի կուտիկ* (զլխարկ), *ծակատի ոսկեշար, ոսկեթելով հյուսված ծամ, զլխի ոսկի քորոց*. զլխի զարդերից՝ *ոսկի ականջօղեր, ոսկի գինդեր, քթի ոսկե օղ, ոսկե ծամոց*. հանդերձանքի և արդուզարդի մյուս տեսակներից՝ *ոսկեթել թաշկինակ, ոսկենալ կոշիկ, ոսկե գոտի, ոսկե մատանի, ոսկե բիլազուկ* ևն, որոնք ունեն ազգագրական կարևոր վկայությունների արժեք:

Հայրեններում և Ֆրիկի բանաստեղծություններում արտացոլում են գտել նաև հին ոսկերչական արհեստին առնչվող տեխնոլոգիական որոշ գործընթացներ, որոնք իմաստավորվել են իբրև բանաստեղծական պատկերավոր համեմատություններ:

Ոսկին լայն արձագանքներ է գտել հայ վիպական ավանդության մեջ: Մասնավորապես զգալի տարածում ունեն ոսկեկերպար անձանց պատկերացումներն ու նրանց շուրջ հյուսված ավանդական գրույցները, որոնք ունեն առասպելաբանական հնավանդ արմատներ և սերում են Տիեզերքի տարբեր առարկաների ու երևույթների (արև, լուսին, ամպրոպ) նախնական պատկերացումներից: Արեգակն, օրինակ, պատկերվել է *ոսկե վրանի, ոսկե*

սափորի, ոսկե արագիլների, ոսկեմագ, ոսկեզլուխ պատանու կերպարներով, որոնց արձագանքներն են նաև *ոսկեքանքուլ* և *ոսկեծկույթ* կամ *ոսկեծամ աղջիկ* երկվորյակների, և *ոսկեմագ որբուհու* մասին լայնորեն տարածված հեքիաթային սյուժեները:

Հայոց ոսկիպատումի մեջ զգալի տեղ ունեն զավեշտական և բարոյափմաստասիրական գրույցները, որոնք ժանրային նկարագրով կենդանական հեքիաթ-առակներ են, իրապատում հեքիաթներ և սնոտիապաշտական գրույցներ: Դրանց մեջ ժողովրդական երգիծանքով, բարոյա-իմաստասիրական ընդհանրացումներով և ավանդական հավատալիքներով արտահայտվել են ոսկու (իմա՝ հարստության, բախտի) նկատմամբ ժողովրդի ունեցած տարբեր վերաբերմունքն ու ըմբռնումները:

Եվ, ի վերջո, ոսկին տարբեր դրսևորումներ է գտել, «Սասնա ծռեր» հերոսավեպում և հայ ասութաբանության (առած-ասացվածք, հանելուկ, օրհնանք, բարենաղթություն) մեջ:

«Սասնա ծռերում» ոսկին հանդես է գալիս սիմվոլիկ-առասպելաբանական իմաստավորմամբ, ծիսագործառական կիրառությամբ և իր բուն սոցիալ-նյութական արժեքով, որոնք վկայում են այդ ազնիվ մետաղի նկատմամբ եղած պալոմամշակութային տարբեր ըմբռնումների պահպանման փաստը այդ հնավանդ վեպում:

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ *ոսկին* իր արժեքով, փայլով, գույնով, գեղեցկությամբ առասպելաբանաստեղծական մտածողության մեջ զուգորդվել է լույսի, գեղեցիկի, ազնիվի, ունեցվածքի բնական, մարդկային ու հասարակական արժանիքներից ու արժեքներին և վերածվել այդ հատկանիշներն արտահայտող խորհրդանիշի կամ փոխաբերության, դարձել հիմնականում *դրականի* արտահայտչամիջոց: Այդ պատճառով էլ ոսկին բանաստեղծական լեզվում հանդես է գալիս գլխավորապես առարկաների, երևույթների, անձանց ֆիզիկական ու հոգեկան դրական բնութագրումների առնչությամբ և բնորոշ է հատկապես գրական ու բանահյուսական որոշակի ժանրերի, որոնց մեջ գերիշխողը գովասանքն է կամ բարենաղթությունը (սիրերգ, գովերգ, ծոներգ, օրհնանք, աղոթք, առած-ասացվածք, հանելուկ, գորովանքի բանաձևեր ևն): Մինչդեռ բանահյուսական նեգատիվ ժանրերում, ուր գերիշխողը չար ցանկությունն է կամ պարսավանքը (ամեծք, հմայական աղոթք, հայիոյանք, սպառնալիք, պարսավանքի բանաձևեր ևն) ոսկին գրեթե հանդես չի գալիս:

Ոսկու նկատմամբ եղած նույն այդ դրական, գեղեցիկ ու ազնիվ գաղափարների դրսևորման արդյունք են հայոց անվանաբանության մեջ *ոսկի* բաղադրիչով կերտված անձնանունները:

Գեղեցկության, բարության, արդարամտության, անմեղության դրական արժանիքներով են օժտված վիպական գրույցներում հանդես եկող ոսկեկերպար անձինք, որոնց ծնունդը կամ

կերպարանափոխումը հանգում է աստվածային հրաշագործության նախասկզբին: Անգամ էպոսի ոսկու ծիսա-առասպելաբանական և սոցիալական գործառույթների նախահիմքում ընկած է արևի խորհրդանիշը, որն ինքնին դրական է ու կենսաբեր: Իսկ տարբեր բնույթի հեքիաթներում և զրույցներում ոսկին հանդես է գալիս իր բուն սոցիալական նշանակությամբ, իբրև հարստության, ունեցվածքի, բախտի խորհրդանիշ, որին միշտ էլ ձգտել ու երազել է մարդկային միտքը, որպես կենսապահովման կարևոր միջոցի:

The Gold in Ancient Armenian Oral and Written Tradition

S.Haroutunyan
IAE

The Armenian word "ոսկի" (voski) originating from the Indo-European pattern *Hau-os, *Hu-os was directly and allegorically used in poetical language of Ancient and Medieval Armenia, especially in the folk novels, myths, medieval poetry, Hayrens and popular songs of the later period. It had greatly reflected Ancient Armenian onomatopoeia especially in topographical and personal names.

Especially interesting are the gold-featured personalization used to be widely exercised in Armenian novelty and literature (gold-haired, golden little finger twins, gold-faced young man, gold stock, etc.), the novel plots narrated for them, as well as satirical, superstitious and morale discourses about the gold as a symbol of wealth, luck, happiness, justice.

For its value, shining, colour, beauty on the gold was well attributive to the light, beauty, comprehension of the honour, just, property in the poetical language and thinking in Ancient Armenia; it turned as an allegory for expressing those concepts where the prevailing part was praising or good-wishing.

Սիմոն Հմայակյան
(ԴԱԻ)

ԴԻԱՈՒԵԽԻ ԵՐԿՐԻ ՈՍԿԵՅԱՆՔԵՐԻ ՇՈՒՐՋ

Դիաուեխի (այլ ընթերցմամբ՝ Տեյավեխե) երկիրը ասուրական արծառագործություններում վկայված է Դայաենի ձևով: Դիաուեխին, սովորաբար, համադրվում է Տայքի հետ: սակայն, սեպագրական շրջանում, Դիաուեխիի կազմում էր գտնվում և Բարծր Հայքը: Մ.թ.ա. 9-8-րդ դարերում Դիաուեխին համադաշնակցություն էր, կազմված՝ Կադա, Աշկալաշի իշխանություններից, Շաշքի, Արդա-րաքիսի, Բալթուլիսի, Կաբիլուիսի ցեղապետություններից և Ուտուխա, Շաշիլու քաղաք-պետություններից: Երկրի արքայա-նիստ քաղաքն էր Ջուանիան (այժմ՝ Զիվիեն):

Դիաուելեխիում գտնվող ոսկու հանքերը շահագործվել են դարերի վեր: Դրանք գտնվում էին Բարձր Հայքի Սպեր (Սիսպիրիտիս) և Տայքի Արսեանց փոքր հարևան գավառներում: Արսեանց փոքրում էր գտնվում հռչակավոր Ոսկեհանքը: Բյուզանդական աղբյուրները կիսառասպելներ են պատմում այդ հանքերի հարստության մասին. «Տեղատարափի անձրևի ժամանակ, ջուրը տանում էր լեռների հողը և երևան էին գալիս ոսկու հատիկները», - հայտնում է Մալալոսը: Հուստինիանոսի օրոք (527-565 թթ.), այդ հանքերը կայսրությանը տալիս էին տարեկան շուրջ 64 կիլոգրամ ոսկի: Այս ոսկու հանքերով հետաքրքրվել է և Ալեքսանդր Մակեդոնացին. «Կան ոսկու հանքեր Սիսպիրիտիսի մեջ՝ Կաբալլայում, ուր ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից գործով, բայց խեղդամահ եղավ բնակիչների կողմից», - հաղորդում է Ստրաբոնը:

Այս ուղղությամբ արշավել են Մենուա (մ.թ.ա. 810-786թթ.) և Արգիշթի (մ.թ.ա. 786-764 թթ.) արքաները, հարքունիս գրավելով ոսկու հանքերի շրջակա գավառները, որոնց թվում և Կաբիլուխի ցեղի երկիրը, որը նույնանում է Ստրաբոնի հիշատակած Կաբալլայի հետ: Ուրարտացիք Դիաուելեխից ստանում էին տարեկան շուրջ 41 մանա (20,7 կգ) մաքուր ոսկի, շուրջ երեք անգամ ավելի քիչ, քան Հուստինիանոսը:

Ուրարտացիք ոսկեհարկը ստանում կան վերածուլում էին ձուլակտորների: Նման մի ոսկե ձուլակտորի քառորդ է գտնվել Կարմիր բլուրում: Կտրվածքի հիման վրա ձուլակտորի ունեցած նախնական տեսքը վերականգնելիս՝ պարզվեց, որ այն ունեցել է 4 ՏՄ քաշ (56,12 գրամ), որը կազմում է մանայի իններորդ մասը:

Սպերի ոսկու հանքերի մասին առասպելներ են պատմվել և վաղ երկաթի դարում, որի ապացույցն է Արգոնավորդների մասին կիսառասպելները, որոնք սկսել են ձևավորվել մ.թ.ա. 13-րդ դարում: Թերևս, այս հանքերին տիրելու նպատակով է Դիաուելեխի արշավել և Թիգլաթպալասար Ա արքան (մ.թ.ա. 1115-1077 թթ.):

Ուշագրավ է, որ հունական սկզբնաղբյուրները այս տարածաշրջանում տիրած արքայական դինաստիային վերագրում էին արեգակնային ծագում: Ուշագրավ է նաև այն, որ Մենուային և Արգիշթիին ժամանակակից Դիաուելեխի արքայի անունն էր Ուտուպուրշինի (մ.թ.ա. շուրջ 790-765 թթ.), իսկ երկրի քաղաքներից մեկը կոչվում էր Ուտուխա: Եթե ընդունենք, որ այս անունները ուրարտացի դպիրը վերցրել է Դիաուելեխյան գրավոր աղբյուրից, որտեղ դրանք կարող էին այդ անունների հակիրճագրերը լինել (^ՍՄՄՄ-ն արևի աստծո անվան շումերագիրն է), ապա կստացվի, որ հույները, նշանայինից բացի (Արեգակ-ոսկի), որոշակի պատմական հիմք են ունեցել նաև այստեղ տիրող դինաստիայի պաշտամունքը Արեգակի հետ առնչելու համար:

The gold mines of Diauekhi country have been exploited for centuries. The desire to dominate over these mines made the King Tiglatpalasar the first to invade to Diauekhi. Diauekhi was also invaded by Kings Menua and Argishti. The First who acquired the provinces neighbouring the gold mines, including the country of Kabilukhi tribe. The Kabilukhi was identified with the Kaballa where, according to Strabo, were the Sispirtis (Sper) gold mines.

The kings of Van received 41 mana (20.7 kg) pure gold annually - about three times lesser than Justinian did.

The people of Urartu used to get the gold-tax and cast into smelted parts. The one quarter of such a smelted part was found in Karnir Blur original weight of which is expertised to weigh 4 su (1su=56.12 gr.) and consists of the ninth part of the mana.

Հուսիկ Մելքոնյան
(ՀՄԻ)

ՈՍԿԻՆ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Հայկական գրավոր աղբյուրները և հնագիտական գտածոները հավաստում են արիեստագործության կարևոր ճյուղերից մեկի՝ ոսկերչության հնագույն ավանդները Հայկական լեռնաշխարհում: Ոսկու հանքերի, դրա արդյունահանման, կենցաղում կիրառման ամենատարբեր ոլորտների մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել հայ և օտար պատմիչների երկերում, ձեռագրերի հիշատակարաններում, վիմական արձանագրություններում:

Մեր լեռնաշխարհում ոսկու հիմնական հանքավայրերի տեղադրությունը ճշգրտելու համար ուշագրավ տվյալներ են պարունակում ոսկու հանքերի և արդյունահանման հին կենտրոնների, նրանց անվան հետ կապված վկայությունները, ավելի ուշ շրջանի ազգագրական նյութերը, տեղագրական բնույթի աշխատությունները:

Հայոց կանոնագրքերը, դատաստանագրքերը (Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ, Դավիթ Ալավկա որդի) ներկայացնում են ոսկու հանքերի հիմնական պաշարների, դրանց պատկանելության պատկերը, վերջիններս տնօրինելու, շահագործելու հետ կապված իրողությունները:

Փիլիսոփայական և ալքիմիական գրականության էջերում անհամար վկայությունների ենք հանդիպում ոսկու պատրաստման արիեստական եղանակների, այն կեղծելու, հատկությունների ու բնույթի մասին:

Շատ կարևոր են ոսկու դերի ու նշանակության վերաբերյալ միջնադարյան պատկերացումների, աշխարհընկալման հետ կապ-

ված պաշտոնական արարողություններում կրած հանդերձանքին և օգտագործած սպասքին վերաբերող նկարագրությունները: Հայոց թագավորն ու նախարարները հանդիսությունների ժամանակ կրում էին իրենց դիրքը և իշխանությունը խորհրդանշող որոշակի հանդերձանք և պերճանքի առարկաներ, որոնք ընդգծում էին այն կրողի տեղն ու դերը հայոց վերնախավի աստիճանասանդղակում, նրա փոխհարաբերությունը հարևան, հաճախ՝ տիրապետող ավագանու հետ: Սկզբնաղբյուրների վկայությամբ՝ իշխանավորներն ու ավագանին որոշակի պատիվների էին արժանանում, որը ևս արտահայտվում էր որոշակի արարողական հանդերձանքի տարրերով: Փաստորեն հանդերձանքի ոսկե և արծաթե տարրերը խորհրդանշում էին այդ պերճանքի առարկաները կրողի ծագումը, պաշտոնը և զբաղեցրած դիրքը հայոց կամ օտար՝ Սասանյան, Բյուզանդական և այլ արքունիքներում:

Ուշագրավ են ոսկուց և արծաթից պատրաստված և թանկագին քարերով ընդելուզված զենքերի մասին գրավոր վկայությունները: Նման զենքեր կրում էին հայ իշխանազույնները պաշտոնական արարողությունների ու հանդիսությունների ժամանակ: Ուշագրավ տեղեկություններ են մեզ հասել հայոց աշխարհիկ և հոգևոր ավագանու թաղման ծեսի և դրա հետ կապված ոսկե իրերի կիրառության մասին:

Բազմաբնույթ իիշատակություններ են պահպանվել միջնադարյան Հայաստանում շրջանառության մեջ գտնվող դրամների վերաբերյալ, որոնցով հնարավորություն է ընձեռնվում վերականգնելու երկրի դրամական շրջանառության, առևտրական կապերի ընդհանուր պատկերը:

Մատենագրության էջերում և վիմական արձանագրություններում բազմաթիվ վկայություններ կան հայ ոսկերիչների պատրաստած ամենաբազմազան առարկաների՝ աշխարհիկ և հոգևոր սպասքի, պերճանքի առարկաների վերաբերյալ: Այս վկայությունների քննությունը տարբեր հնավայրերից հայտնաբերված ոսկե առարկաների հետ ի հայտ է բերում Հայաստանի միջնադարյան ոսկերչության ընդհանուր պատկերը, հայտնի դարձնում ոսկերիչ վարպետների նորանոր անուններ:

The Gold in Medieval Armenian Sources

H.Melkonyan
IAE

The medieval Armenian written sources witness the oldest traditions of the goldsmith's art - one of important branches of craftsmanship in Armenia. These original sources contain important evidences about gold mines in Medieval Armenia, their exploitation and legal relations in this regard. These are interesting evidences about the role and

significance of gold preserved in medieval imaginations, clothings, weapons and ornaments used by Armenian nobility. During the official rituals and solemnities the kings and royals of Armenia used to bear certain clothings and items of luxury symbolizing the power, place and role in the higher ranks of hierarchy. Evidences deserve much attention relating to burial rites where the gold has its intrinsic employment.

Essential part of evidences report about the gold coins in circulation in Armenia. These evidences about the gold and its comparison with gold objects disclosed from findings do restore the general gold history of medieval Armenia.

Լևոն Պետրոսյան
(ՀԱԻ)

ԼՃԱՇԵՆԻ ՈՍԿԻՆ

Հայկական լեռնաշխարհի ոսկու պատմության ուշ բրոնզեդարյան փուլի սկիզբն ազդարարող և տարածաշրջանի ոսկերչական արտադրանքի գրեթե ողջ տեսականին ընդգրկող նշանակալից հավաքածուներից մեկը պեղվել է Լճաշենի դամբարանադաշտում: Պարսպապատ և ծավալուն ամրոց-բնակատեղիի շուրջ սփռված դամբարաններով այս հուշարձանախումբը զբաղեցնում է Լճաշեն և Չկալովկա գյուղերի միջև ընկած տարածքները, ուր 1950-90-ական թթ. Հ. Մնացականյանի և Լ. Պետրոսյանի ղեկավարած արշավախմբերը պեղել են ավելի քան հազար դամբարան:

Հուշարձանախմբում պեղված մեծաքանակ նյութերն ու տվյալները Անդրկովկասի ուշ բրոնզեդարյան մշակույթի ուսումնասիրության առաջնակարգ սկզբնաղբյուրներ են, որոնց մեջ տեղեկատվական ներուճակությամբ հատկապես առանձնանում են ոսկուց պատրաստված պերճանքի առարկաները:

Լճաշենի ոսկե իրերի բացարձակ մեծամասնությունը հայտնաբերվել է երկրորդ դամբարանաբլուրից: Դարաշրջանի ոսկերչական արտադրանքի գրեթե ողջ ընտրանին ներկայացնող արդուզարդի ուշագրավ նմուշները՝ ոսկու նրբաթիթեղից պատրաստված (զնդածե, գլանածե, ոսպածե, կաթիլածե, հատիկաշար և այլն) ուլունքները, կնոջ սխեմատիկ պատկերով կախիկները, բաժանարարներն ու զարդակոճակները լեռնաշխարհի զարգացած ղեկորատիվ-կիրառական արվեստի լավագույն վկայություններն են:

Ոսկերչական արտադրանքի պերճաշուք օրինակ է ոսկու նրբաթիթեղից պատրաստված գորտը: Պերճանքի առարկաների ուշագրավ նմուշներ են ծիրանի կորիզ հիշեցնող ոսկուց ուլունքները, որոնք գտնվել են 10-րդ դամբարանաբլուրից: Հուշարձանախմբի այլ համալիրներից գտնված ոսկե զարդերն ըստ էության կրկնում են վերը հիշատակված օրինակներին:

Լճաշենի ոսկե գտածոների մեջ բացառիկ նմուշ է բրոնզե հիմքի վրա, ոսկու նրբաթիթեղի երեսպատմամբ պատրաստված առյուծի

զլխով ճարմանդ-զարդակոճակը, որի անմիջական զուգահեռը (թվագրվում է մ.թ.ա. 1350 թ.) հայտնի է Էլամից:

Լճաշենից գտնված ոսկե զարդերի տարատեսակները բնորոշ հատկանիշներով աղեղնավում են Անդրկովկասի ուշ բրոնզեդարյան և երկաթեդարյան բազմաթիվ հուշարձաններից հայտնի նմանօրինակ գտածոների հետ: Ավելին, բազմաթիվ են այն օրինակները, որոնց անմիջական զուգահեռները կամ նախատիպերը հայտնի են միջին բրոնզի դարաշրջանի հուշարձաններից: Այս ամենը մեկ անգամ ևս թույլ է տալիս սահմանագծելու մշակութային այն տարածաշրջանը (Հայկական լեռնաշխարհ), որն, ավանդաբար փոխանցվող իր ինքնատիպ ոճով, Հին Արևելքի ոսկերչության հաստատուն մաս է կազմել:

Լճաշենից հայտնաբերված ավելի քան 250 ոսկե զարդերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանք պատրաստվել են կոճան, ծուլճան, երեսպատման և այլ եղանակներով, պատկերազարդվել ու հարդարվել են հատիկազարդով, ընդելուզմամբ, դրվագմամբ, մանրարուրքով, դաջման, սեղմելու և այլ հմարներով, որոնք վկայում են զարգացման բարձր մակարդակի հասած ոսկերչության մասին:

The Gold of Lchashen

L. Petrosyan
IAE

The attractive patterns of jewellery from Lchashen - beads, the woman appearance hook, dividers and adorned buttons - made of the fine gold, are the evidences of the decorative-application art that represents almost the whole selection of the gold manufacture of the Late Bronze Age.

The subtypes of golden jewels discovered from that monument are well identified with similar findings of numerous monuments of the 3-2 millennia in Armenia. All this allows to identify once again the cultural aerial (the Land of Armenia) that had its firm place in the goldsmith's art in the Ancient East.

Համլետ Պետրոսյան
(ՀԱԻ)

ԼՈՒՅՍԸ ԵՎ ՈՍԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼՔՈՒՄ

Հայերի դարձի առասպելի կարևոր բաղկացուցիչներից է աստվածային լույսի էջը հայոց մայրաքաղաքի վրա, որը մանրամասնորեն նկարագրված է Գրիգոր Լուսավորչի տեսիլքում:

Միջնադարի հայ քրիստոնյա միտքն այն համարում էր աստվածային նախախնամության առանձնակի վերաբերմունքի ցուցադրում Հայաստանի ու հայերի նկատմամբ: Տեսիլքի մեզ հետաքրքրող մասում պատմվում է, որ երկնային հաստատությունը բացվում է, լույսի և լուսեղեն կրակաթև հրեշտակների հոսքի առաջնամասում արծվի մման դեպի երկիր է խոյանում մարդակերպ մի հսկա՝ զինված ոսկե կռանով: Հասնելով Վաղարշապատի հրապարակ՝ նա կռանով հարվածում է երկրին, երկրի խորքերից (սանդարամետ-դժոխքից) լսվում են թնդուններ, երկիրը տափականում է, արքունի ապարանքի մոտ գոյանում է խոշոր բլրի մեծությամբ ոսկի խարիսխ՝ վրան հրեղեն սյուն, որն ավարտվում է ամպեղեն խոյակով և լուսեղեն խաչով (Ագաթանգեղոս, 733-736):

Ինչպես տեսնում ենք, այս տեսիլքում աստվածային լույսը, ոչ թե սոսկ նշանի՝ ցուցման դեր է խաղում, ինչը բնորոշ է միջնադարյան տեսիլքներին ընդհանրապես, այլ հանդես է գալիս որպես «գործուն» մի գորություն, որն իր «ծանրությամբ» սաստում է հեթանոսական-դժոխային ուժերին, բայց և իր «լուսարձակումով» ստեղծում դեպի երկինք խոյացող, սկզբունքորեն «անկշիռ» երկնային-լուսային կառույց: Կործանման և արարման այս երկու արտաքնապես անհամատեղելի տիեզերական ակտերը իրագործող լույսը (որը վերջին հաշվով սիմվոլացնում է աստվածային գորության՝ անհամատեղելին համատեղելու կարողությունը), անպայմանորեն կարիք է զգում իր ծանրությունը ցուցող, բայց և թեթևությունը չժխտող մետաֆորայի: Եվ եթե լույսն այս տեսիլքում հանդես է գալիս որպես աստվածային էության բացարձակ սիմվոլ, ապա ոսկին էլ հանդես է գալիս որպես աստվածային լույսի բացարձակ սիմվոլ:

Եռյակ այս հիերարխիան (աստված-լույս-ոսկի) իր արտահայտությունն է գտել հայերի դարձի առասպելի մի շարք կոնկրետ և վերացական անվանումներում: Եթե «Էջմիածին» անվանումը ցուցում է աստվածային գորությունը, ապա «Շողակաթը» երկնային լույսի նյութականացված (ոսկեղինացված) իջնելը, իսկ «Գրիգորիոս» (որ նշանակում է մշտաբուն և նույնական է «զվարթունի» հետ) և «Լուսավորիչ» անվանումները ցուցում են լույսը:

Վաղ միջնադարում աստված-լույս-ոսկի հիերարխիկ շարքի մշակումը, որի արտահայտություններից մեկն էլ Գրիգոր Լուսավորչի տեսիլքն է, սկզբունքային նշանակություն ունեցավ եկեղեցական լուսամիջոցների, սպասքի, հանդերձի «ոսկեղինացման» համար: Այն հայտնի չափով պայմանավորեց քրիստոնյա միջնադարում ոսկու նկատմամբ երկու՝ սկզբունքորեն իրարամերժ թվացող վերաբերմունքների համագոյատևումը. արհամարհանք դեպի ռեալ ոսկին, բայց և նրա օգտագործումը քրիստոնեական պաշտամունքի ու ծիսակատարության զանազան բնագավառներում:

In the vision of Gregory the Illuminator, which is a part of the myth of conversion of Armenians, the descending of god almightiness and as its result, the appearance of the first Christian constructions in Vagharshapat are presented as a result of "independent" activity of the light and the gold. The examination allows to mark, that the light in the vision appears as the divine essence, and the gold as a symbol of the light. In early medievals, Christian treatment of the combination god-gold-light to the extend known, caused two contradictory approaches to the gold: neglect to the real gold and its use in Christian service and in various spheres of ritual.


Աշոտ Փիլիպոսյան

(ՀԱԻ)

ՈՍԿՈՒ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼԵՐՈՒ
ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Հին Արևելքի ոսկու հանքերի շահագործման, թանկարժեք մետաղի ստացման ու վերջինիս տարանցիկ առևտրի իրականացման մասին տեղեկատվություն պարունակող սկզբնաղբյուրները հնագիտական, երկրաբանական, փաստագրական և առասպելաբանական բնույթ ունեն։ Այս խնդիրներով ժամանակի ընթացքում հետաքրքրվել և ներկայումս էլ զբաղվում են բազմաթիվ մասնագետներ (Գ. Չայլո, Ջ. Ֆորբես, Ա. Թոբլեր, Ա. Ֆալկենշտայն, Ռ. Լիմանս, Դ. Էդգարո, Ա. Օպենհեյմ, Գ. Վիլիելմ, Ա. Հարթման, Կ. Մաքսուել-Հիսլոպ, Պ. դե Ջեսուս, Հ. Տոդորովա, Յ. Մաջիդզադե, Գ. Կոմորոցի, Բ. Գրոնեբերգ, Ռ. Մուրի, Բ. Պիդորովսկի, Վ. Աբրահամյան և այլք)։ Վերջիններիս ուսումնասիրությունների և սեփական դիտարկումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ մ.թ.ա. 5-1-ին հազարամյակներում հիմարևելյան ոսկու տարանցիկ առևտրի իրականացման գործում առանձնահատուկ դեր են ունեցել հիմնականում երեք տարածաշրջաններ 1. Եգիպտոս-Նուբիա, 2. Փոքր Ասիա-Հայկական լեռնաշխարհ, 3. Իրանական սարահարթ-Միջին Ասիա-Ինդոսի հովիտ։ Ըստ որում, կախված կոնկրետ ժամանակաշրջանին հատուկ սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակներից, նշված տարածաշրջաններից յուրաքանչյուրը մերթ ընդ մերթ առաջնային կամ երկրորդական պլան է մղվել, երբեք չդադարելով թանկարժեք հումքի մատակարար հանդիսանալուց (տես՝ քարտեզը)։

Քննարկվող խնդրի վերաբերյալ երկրաբանական-հնագիտական և փաստագրական-առասպելաբանական սկզբնաղբյուրների



ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐՆ ՈՒ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՌԵՎՏՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ
 ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ Մ.Ձ.Ա. IV - I ՀԱՅԱՐԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ
 /ըստ արձանագիր տեքստերի և երկրաբանա-հնագիտական գտածոների/

- | | |
|--------------------------------------|-------------------------------|
| 1. Բեհենի /Կուպտոսի/ հանքեր | 5. Երրոխի հովտի ոսկեքեր շրջան |
| 2. Նուբիական /Թուշի և Վալատի/ հանքեր | 6. Մերձուրմիական հանքեր |
| 3. Պակրոլոսի հովտի ոսկեքեր շրջան | 7. Քերման-Բաղախշանյան հանքեր |
| 4. Տավրոսյան ոսկու հանքեր | 8. Մագանի հանքեր |
| 9. Ինդոսի հովտի /Մելուխխա/ հանքեր | |

տեղեկատվության պատմա-ժամանակագրական վերլուծությունը քույլ է տալիս վերհանել ողջ տարածաշրջանում ոսկու հայթաթման և օգտագործման հետևյալ մոտավոր համայնապատկերը.

ա/ Մ.թ.ա. 5-3-րդ հազ. ընթացքում հասարակական հարաբերությունների աստիճանական զարգացումը որպես ձևավորվող մետաղագործության ուրույն դրսևորում, սոցիալ-տնտեսական գործընթացների ոլորտն է ներկրում նաև ոսկին: Այս փուլը հիմնականում կարևորվում է ոսկու հանքերի /գլխավորապես ցրոնային/ հայտնաբերման և շահագործման փաստով: Այդ առումով /այսօրվա տվյալներով/, որպես առավել հնագույններ կարող են համարվել Եգիպտոսի հարավի, Հայկական լեռնաշխարհի հարավի և Պարսից ծոցի հանքավայրերը, իսկ որպես դրանց առաջին շահագործողներ՝ Միջագետքի, Եգիպտոսի և թերևս Իրանական սարահարթի հարավ-արևմտյան շրջանի առավել զարգացած սոցիալական կազմավորումները:

բ/ Հասարակական հարաբերությունների հետագա զարգացումն, առևտրա-փոխանակային մշակված համակարգի և որոշակի ուղղվածություն ունեցող ճանապարհների հանդես գալը և վերոհիշյալների հետևանք՝ ընդգծված սոցիալական հիերարխիա թելադրող ռազմաքաղաքական միավորների ձևավորումը, մ.թ.ա. 3-րդ հազ. վերջից մինչև մ.թ.ա. 2-րդ հազ. 1-ին կեսն ընկած ժամանակահատվածում Հին Արևելքի հայտնի ոսկեբեր շրջաններն, ըստ էության, բաժանեց ռազմա-պետական կոնկրետ կազմավորումների միջև /եգիպտոսի թագավորություն, հեթական պետություն, Միտաննի, Կասսիտական Բաբելոն, Ասորեստան/ պայմանավորելով ինչպես ոսկու հայթայթման ու ոսկերչության ինքնատիպ եղանակների զարգացումը, այնպես էլ ոսկե արտադրանքի օգտագործումը որպես տարածաշրջանի ռազմաքաղաքական և իրավա-դիվանագիտական կոնյունկտուրայի կարգավորման միջոց:

գ/ Հին Արևելքի ոսկեբեր տարածքների «սեփականաշնորհումը» ռազմա-պետական հզոր միավորումների կողմից, տարածաշրջանի մյուս ցեղերին և ցեղային միություններին միանգամից զրկեց ոսկու ավանդական հանքավայրերից ազատ օգտվելու հնարավորությունից, դրանով իսկ նախադրյալներ ստեղծելով սեփական հանքավայրերի հայտնաբերման ու շահագործման համար: Մասնավորապես հենց նման իրավիճակի արդյունք էլ կարելի է համարել Հրազդանի միջին հոսանքի /Մարմարիկի հովտի/ և Սևանա լճից հարավ-արևելք ընկած ոսկու հանքավայրերի շահագործումը Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսից:

Բերված դիտարկումների հիման վրա կարելի է արձանագրել, որ Հայկական լեռնաշխարհը կարևոր դեր է խաղացել Հին Արևելքի ոսկու տարանցիկ առևտրի կազմակերպման և իրականացման գործում և, եթե սկզբնական փուլում հիմնականում հանդիսացել է թանկարժեք հումքի թերևս պասիվ մատակարար, ապա մ.թ.ա. 3-2-րդ հազ. սահմանագծից արդեն աստիճանաբար վերածվել է ոսկու արդյունահանման և ոսկերչության զարգացման արհեստագործական ինքնուրույն կենտրոնի:

Armenian Highland and Transit Trade of Gold in Ancient East

A. Piliposyan
IAE

Based on geological, archaeological, mythological data there were 3 basic regions for gold and other precious metals mining in Ancient East:

1. Egypt-Nubian
2. Small Asia-Armenian Highland
3. Iranian Upland - Middle Asia-Indos Valley.

If during 5-3 millennium B.C. the land of Armenia was a passive supplier of precious raw materials then beginning from 3-2 millennium B.C. Armenia became independent center of mining and goldsmith art.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Վաղ շրջանի աղբյուրների ակնարկները և անտիկ հեղինակների վկայությունները /Ստրաբոն/ Հայաստանի ոսկու հանքերի վերաբերյալ ավելի քան հիմնավորվում են միջնադարյան հայ և օտար պատմիչների հաղորդումներով /Ղազար Փարպեցի, Պրոկոպիոս Կեսարացի, Հեթում, Հակոբ Կարմեցի, Մալալոս/: Ոսկու արդյունահանմանը հնուց ի վեր մեծ նշանակություն է տրվել, որը և տեղ է գտել նաև իրավական բնույթի գրավոր աղբյուրներում /Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ/:

Հայաստանի ոսկու հանքերը հիմնականում գտնվել են Եփրատ և ճորոխ գետերի վերին հոսանքներում՝ Սպեր, Տայք, Բարձր Հայք գավառներում: Այս հատվածով է անցել բյուզանդապարսկական սահմանը 387 թ. Հայաստանի բաժանումից հետո, և հանքերի առկայությունը տարբեր ժամանակաշրջաններում տեղիք է տվել երկու հզոր տերությունների միջև հակամարտությունների:

Միջնադարյան Հայաստանում ոսկու արդյունահանումը և հանքերի տարածվածությունը կապվում է նաև «ոսկի» արմատով տեղանունների հետ: Դրանք բնակավայրերի, գետերի, լեռների, դաշտերի անվանումներ են, որոնք չեն կարող պատահական լինել: Այդ անվանումները հանդիպում են Տայքում, Դերսիմում, Գուգարքում, Ծաղկոտնում, Բագրևանդում, Այրարատում, Վանի շրջանում, Սևանա ավազանում և այլուր:

Ժամանակակից Ջոդ և Մեղրածոր հանքերի նշակման վերաբերյալ հին աղբյուրներում ուղղակի վկայություններ չկան: Սակայն տեղում պահպանվել են արդյունահանման հետքեր հին շրջանից մինչև միջնադար:

Armenian Gold Mines in Mediaevals

A. Kalantaryan
IAE

Articles from the sources of the early period and evidences of antique authors (Strabo) on Armenian gold mines are confirmed by articles of medieval Armenian and foreign historians (Ghazar Parpetsi, Prokopius Caesar, Hetum, Hakob Karnetsi, Malalus). Gold mining since old times on was paid a great attention to. It found its place in literary sources of legal nature.

Armenian gold mines were generally located in the upper streams of Euphrates and Chorokh rivers: Sper, Taik, High Haik regions. In this place was the Byzantine-Persian frontier after the separation of Armenia in 387 AD and the existence of gold mines in different times brought to confrontation of two mighty kingdoms.

Gold mining and location of mines in medieval Armenia was also connected with the names of territories with the root "gold". They were names of territories, rivers, mountains, valleys, which cannot be accidental. These names can be met in regions of Taik, Dersim, Gougark, Tsaghkotn, Bagrevan, Airarat, Van, Sevan basin and everywhere.

There are no direct evidences on mine processing of modern mines of Zod and Meghradzor. But signs of mining since old period to medievals were preserved in the place.

Ф. Тер-Мартirosов
(ИАЭ)

ДВЕ НАХОДКИ ИЗ АНТИЧНОГО ШИРАКАВАНА

В 1979 г. при раскопках теменоса храмовой общины на площади верхней террасе, перед главным святилищем, среди фрагментов многочисленных приношений была найдена маленькая гиря, представляющая собой по форме конус, изготовленный из поделочного камня темно-вишневого цвета. Камень хорошо обработан полировкой и имеет форму конуса с круглым основанием. С одной стороны конус сильно потерт и приобрел плоскую поверхность. Высота конуса 20мм, наибольший диаметр 15мм, наименьший диаметр 10мм. Вес 3,34г (Ширакский краеведческий музей, N3695/779).

По форме данная гирька аналогична гирям для взвешивания ценных металлов. Наиболее древней ее аналогией являются хеттские конические каменные гирьки. Более поздней аналогией являются византийские стеклянные конусовидные гирьки из средневекового Двина. Святилище теменоса античного Ширакавана датируется I в. до н.э. - сер. I в. н.э. Этим же временем, вероятно следует датировать и нашу гирьку. Вес гирьки (3,34г) отличается от веса римского динария. Однако, не исключено, что первоначально вес гирьки был несколько большим и был равен весу драхмы, римской весовой системы, то есть 3,41г. Вероятно гирьку специально подвергли порче, стерев наплоско одну ее сторону, и она была принесена в качестве дара в святилище. Находка ее у святилища объясняется тем, что судя по найденным материалам, в нем почиталось божество Солнца, воспринимавшееся в древней Армении как покровитель торговли.

Как форма, так и вес гирьки из Ширакавана указывают на малоазийское направление торговых контактов. Находка гирьки в храмовом поселении Ширакавана являются подтверждением мнения о том, что храмовые поселения

античной Армении являлись не только культовыми, но и экономическими центрами страны.

В 1977 г. при раскопках позднеантичного некрополя (II-IV вв. н.э.) античного Ширакавана была расчищена погребение N4, в котором была найдена золотая пластинка. Погребение представляло собой каменный ящик, длиной 180 см, сложенный из хорошо тесанных плит, по две плиты по боковым сторонам и по одной на торцовых сторонах, у головы и у ног погребенного. Погребение было перекрыто огромной туфовой плитой неправильных прямоугольных очертаний. Ориентация погребения восток-запад. Покойник лежал на спине со слегка согнутыми ногами, повернутыми на юг. То есть, можно предполагать, что труп был первоначально уложен на правый бок и погребенный был мужчиной (наблюдения Л.Еганяна по материалам Бениаминского могильника). Кроме золотой пластинки, зажатой зубами во рту погребенного, другого сопровождающего материала в погребении не было.

Тонкая золотая пластинка имеет рваные очертания. Длина 16 мм, ширина около 5 мм, толщина 0,2 мм. Вес пластинки 0,17 г (Ширакский краеведческий музей N3695/776).

Несомненно, что находка золотой пластинки в погребении связана с распространенным в античном мире обрядом положить умершему в зубы монету (обол) для уплаты Харону-перевозчику душ в подземельное царство. Этот обычай хорошо прослежен по материалам погребений Армении. Наиболее ранняя монета из погребений датируется II в. до н.э., а наиболее поздней является монета сасанидского царя Арташира I (226-242 гг. /Аракелян Б.Н., Хачатрян Ж.Д./). Находки монет в античных погребениях свидетельствуют также о широко развитом денежном обращении. Однако, период II-IV вв. являлся кризисным периодом экономики Армении. Погребение N4 из Ширакавана пока уникально из известных нам античных погребений и является прекрасным примером переосмысления и консервативности древних обрядов в изменившихся условиях упадка денежного обращения.

Two Findings From Antique Shirakavan

F.Ter-Martirosov
IAE

During excavations of temple community of Shirakavan in the square before the sanctuary, conical stone weight made of jasper, was found. Its weight is 3,34 g. Obliteration of one side of the weight's cone can be viewed as a fact of ritual spoiling or, which is more possible, it reflects changes of drachma's weight in Roman weight system from 3,41 gr. to 3,35 gr. after 67 AD.

Finding of the weight near the sanctuary corroborates the theory that not only temple communities of Armenia were worship, but rather economic centres of the country.

During excavations of the sepulchre of II-IV cc of Shirakavan, in interment N4 the burial with gold plate in the deceased's teeth was found. This interment is an example of the re-comprehension of the funeral ritual - to put the coin with the deceased to pay Hahron, under conditions of decrease of money circulation in the country.

А.Геворкян (ИАЭ)

М.Залибекян ("Армзолото")

ДРЕВНЯЯ ЗОЛОТОДОБЫЧА В АРМЕНИИ

Недра Армении располагают достаточным количеством золотоносных месторождений. Своим скромным масштабом они ни в коей мере не могут тягаться с крупнейшими золотоносными провинциями мира — Южная Африка, Австралия, Северная и Южная Америка, Сибирь, Центральная Азия, Индийский субконтинент, Малайский архипелаг и др. Но даже при всей своей скромности, эти месторождения сыграли значительную роль в истории древнейших культур Армянского нагорья и всего Ближнего Востока.

По геологическим данным только в сегодняшней Армении известны несколько десятков месторождений и проявлений золота. Ввиду отсутствия исчерпывающих научно-геологических сведений по Западной Армении, говорить о всей территории Армянского нагорья чрезвычайно сложно. Наши сведения ограничиваются скудными данными 50-х годов, опубликованными турецкими специалистами. По этим публикациям на всей территории Западной Армении насчитывается менее одного десятка золотоносных месторождений, что на наш взгляд не соответствует реальной действительности. Что же касается вопроса древних горных работ на западных месторождениях, то относительно этого мы не располагаем абсолютно никакой информацией.

Специальных историко-геологических исследований по золоту Республики Армения практически не проводились. Исключения составляют Зодское и Меградзорское рудники, о древних разработках которых имеются две публикации (Мадатян Э.М., 1965, Залибекян М.А., 1993). Об остальных же месторождениях в геологической литературе иногда можно встретить вскользь брошенную фразу: "...оно эксплуатировалось в древности...". Наши краткосрочные изыскания убедили

нас в том, что для реального представления о процессе и масштабе древней золотодобычи, имеющийся материал крайне недостаточен, и поэтому сегодня мы можем отметить всего несколько ее характерных особенностей.

На начальном этапе, очевидно с II-ой четверти III тыс. до н.э., велись эпизодические поиски россыпных самородков золота в долинах рек протекающих в непосредственной близости от коренных месторождений. Такими реками могли быть Сот и Сеидляр у Сотка, Мармарик и ее небольшие притоки в районе Анкаван-Меградзорского рудного поля, ущелье реки Агстев и ее небольшие рукава от с.Лермонтово и дальше вниз по течению, на берегах которого находятся несколько месторождений и проявлений золота-Тандзут, Гамзачиман, в пойме речки Чкнах от с.Арманис до ее впадения в р.Дзорагет у Степанавана (Арманисское месторождение), в песчаных наносах реки Дебет и ее притоков, начиная от г. Алаверды до реки Храми. Здесь могли намываться зерна золота из Алавердской полиметаллической металлогенной зоны. Могли находить золотники и в наносах многочисленных рек и речушек вблизи южно-зангезурской группы месторождений.

На отдельных месторождениях сохранились следы древних горных работ открытого типа. Они прослеживаются на поверхности в виде траншей, тянущихся по выходам рудных тел-Зод, Меградзор. Размеры их весьма внушительны-до 400 метров в длину, 50 метров в глубину при ширине до 30 метров. Здесь же имеются и воронкообразные углубления, расположенные цепочкой по линии простираения золотоносных жил. Глубина их достигает 3-х метров, а диаметр устья до 10-15 метров (Зод, Арчасар-Гамзачиман).

Прямых свидетельств о возрасте открытых разработок у нас пока нет. Но судя по случайным находкам позднебронзовой и раннежелезной керамики и присутствию рядом с разработками скоплений небольшого числа погребений, обнесенных, кромлехами (Меградзор), мы с большой долей осторожности полагаем, что начало открытых разработок по Армении может совпадать с эпохой поздней бронзы и продолжаться в раннежелезное и более позднее время.

Подземные горные выработки: горизонтальные наклонные и вертикальные. Они иногда имеют специальные устройства в виде деревянных креплений (Фиолетово, Зод, Меградзор, Гамзачиман). Начало такого типа горнопроходческих работ мы предварительно относим к I-ой половине I тыс. н. э.

Из орудий, связанных с золотопроизводством, до нас дошли различные каменные приспособления для дробления, растирания и промывки руды (ступки, рудотерки, жернова). Они найдены почти на всех месторождениях, которые в древности эксплуатировались (Меградзор, Фиолетово, Гамзачиман, Зод). Как правило они сделаны из твердых гранодиоритов, отличаются массивностью, сильной изношенностью рабочей поверхности и хорошей сохранностью. Установить начальную стадию их применения очень трудно. Ступки вероятно могли применяться с эпохи поздней бронзы (возможно и раньше), лоткообразные рудотерки с конца II тыс. до н. э., крутящиеся жернова с первых веков н. э.

Все наши наблюдения носят предварительный характер. Для полного понимания и научного осмысления всего механизма древней рудодобычи золота и его обработки требуются целенаправленные археологические исследования как самых месторождений, так и территорий прилегающих к ним. В процессе разработки данной тематики мы убедились, что золотодобыча и златоделание в целом, на протяжении тысячелетий явилось как бы особым, чувствительным индикатором, тонко реагирующий на все политические и социально-экономические процессы, происходящие в сложной истории Армении.

Mining of Gold in Ancient Armenia

A.Gevorkyan (IAE)

M.Zalibekyan ("Armgold")

There are dozens of fundamental and spilled gold deposits in Armenia. Though their moderate sizes, deposits played a significant role in the history of ancient culture of Armenia and Near East.

The synthesis of geological and archaeological researches enable to conclude that since 2nd quarter of the 3rd millennium B.C. episodic researches of spilled originals of gold have been launched in alluvial deposits of rivers (Aghstev, Sotk, Masrik). From the later Bronze epoch there has observed transmission to exploitation of fundamental deposits with lodes going out the ground surface. Traces of such open mountain developments were preserved in Zod, Meghradzor, Hamzachiman. There are various stone implements in these fields related to enrichment of gold-bearing ore (mortars, kernel-graters, millstones). The early medievals report beginning of exploitation of deep levels in mountains with complex underground passages.

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0592669

A II
84442

ՀՀ ԿԲ հրատարակչական բաժին